«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Բնօրինակ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N 1-Ա

ք. Երևան 28.12.2023թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ և ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐ ԴԱՎԻԹ ԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՆԿԱՏՄԱՄԲ «ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ» ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի, 218-րդ հոդվածի, 220-րդ հոդվածի 1-ին մասերի, 222-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 224-րդ հոդվածի, 226-րդ հոդվածի 1-ին մասի և 227-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով 2023 թվականի դեկտեմբերի 22-ին «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին Դավիթ Խիթարյանի ներկայացրած գրավոր պարզաբանումները (բացատրությունը)՝

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը **որոշում է՝**

1.«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) և Դավիթ Խիթարյանի միջև 2021 թվականի հունվարի 29-ին կնքված N 1-1 աշխատանքային պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու, հոգաբարձուների խորհրդի հանձնարարականը (Խորհրդի 2023 թվականի հոկտեմբերի 5-ի և նոյեմբերի 14-ի նիստերում տրված) պատշաճ չկատարելու և խորհրդին պատշաճ հիմնավորումներ և անհրաժեշտ փաստաթղթեր չներկայացնելու՝ մասնավորապես, հիմնադրամում աշխատակիցների (այդ թվում՝ ռեկտորի) պարգևավճարների, խրախուսանքի գործիքակազմի, հաստիքային աշխատավարձերի ձևավորմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ, ինչպես նաև այդ աշխատանքները չկատարելու համար **Հիմնադրամի տնօրեն/ռեկտոր Դավիթ Խիթարյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժ:**

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԿԱՐԵՆ ԳԻԼՈՅԱՆ

Ծանոթացա [illegible]

29.12.2023թ.